

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ



ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

## 1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2016-2020 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները:

ՀԶԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքի կազմում ընդգրկված ենթակառուցվածքները և մատուցվող հանրային ծառայությունները.
- համայնքում առկա վտանգները (ոհսկերը):

ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է նաև ՀԶԾ-ի մշակմանը մասնակցած՝ համայնքի ԲԱԽ-երի կողմից կատարված աշխատանքով և առաջարկություններով, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Իմ աշխատանքային գործունեության ողջ ընթացքում աշխատել եմ օգտակար լինել յուրաքանչյուր մարալիկցու, ջանացել վերակառուցել քաղաքը , որը մեր բոլորի տունն է, այն դարձել է ավելի բարեկարգ, գեղեցիկ, կանաչապատ, ծաղկապատ ու լուսավոր: Աշխատանքի մեջ եղել եմ վստահ, վճռական, քանի որ իմ թիկունքին ունեցել եմ Ձեր աջակցությունը: Ձեր հոգսը համարել եմ իմ հոգսը, Ձեր հաջողությունը իմ և մեր քաղաքի հաջողությունը:

Մեր հարաբերությունները հիմնված են փոխադարձ հարգանքի և վստահության վրա:

Արվել է հնարավոր ամեն ինչ քաղաքում նորմալ բարոյահոգեբանական մթնոլորտ ապահովելու համար: Ամենակարևորը քաղաքի ազգաբնակչությանը մեկը մյուսի հանդեպ հարգանքն է, հանդուրժողականությունը, միասնությունը, հավատը այսօրվա և վաղվա օրվա նկատմամբ, վստահությունը տեղական ինքնակառավարման մարմնի, իրենց երկրի հանդեպ:

Իմ կողմից արվել է հնարավոր ամենը Ձեր կյանքը Մարալիկ քաղաքում պահել ապահով, հուսալի, քաղաքը Ձեր հետ միասին պահպանել և շենացնել, քանզի մեր քաղաքը մեր բոլորի տունն է, որը պետք է միասին մեր ձեռքերով կառուցենք, շենացնենք և զարգացնենք:

Հետևողական եմ եղել Ձեր բարձրացված խնդիրներին , որոնք իմ համար դարձել են ծրագիր, հետամուտ եմ եղել դրանց լուծմանը:

2004-2015թթ Մարալիկ քաղաքի համար զարգացման տեսանկյունից արգասաբեր է և բեղուն, քանի որ այս ընթացքում քաղաքի համար լուծվել է կրթօջախների վերանորոգման, հանգստի գոտիների կառուցման, կոմունալ, կենցաղային, ճանապարհաշինական, լուսավորության, բնակարանային ֆոնդի պահպանման, մշակութային հարցեր:

Ձևավորվել է կայուն մթնոլորտ ողջ քաղաքում:

### 3. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

#### 3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դիրքացույցները 40°34'58"N 43°52'24"E

Մարալիկ համայնքը ստեղծվել է 1828 թվականին, որպես գյուղական բնակավայր: 1996թ–ից դասվում է Հայաստանի քաղաքային բնակավայրերի շարքին:

Մարալիկ համայնքը գտնվում է Շիրակի սարահարթի հարավային եզրին, Արագած լեռան հյուսիս-արևմտյան մասում: Տեղանքը զանգվածային լեռնային է, բնակավայրի հարավն ու արևմուտքը հոծ բլուրներ են, առանձին արտահայտված գագաթներով, որոնք ունեն տխուր անցյալից ժառանգված անուններ Ղըզըլ-դաղ /Կարմրասար/, Շիշթափա /Սեպասար / և այլն: Համայնքի վարչական տարածքը՝ 334 հա է: Մարալիկ համայնքով անցնում է Գյումրի-Երևան ավտոմայրուղին: Մարզկենտրոնից գտնվում է 27 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաքից՝ 92կմ: Ծովի մակերևույթից գտնվում է 1718մ բարձրության վրա: Սահմանները հարակից են Ձորակապ , Քարաբերդ, Իսահակյան, Գուսաննա, Հոռոմ ,Հայրենյաց, Հայկասար գյուղական համայնքներին:

Համայնքում կա երկաթգծի ճանապարհ, որը չի գործում, այն անցնում է Պեմգաշեն, Արթիկ, Գյումրի համայնքների սահմանով: Ճանապարհները գտնվում են վատ վիճակում, երկաթգծերը թալանված, իսկ մնացածը քայքայված են:

Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, քամու առավելագույն արագությունը 25 մ/վ է: Հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ:

Համայնքը գտնվում է երկրաշարժերի օջախի Շիրակի տարածքում: Ըստ սեյսմիկ կանխագուշակման տվյալների համայնքը ենթակա է 8-10 բալ ուժգնության երկրաշարժի:

#### 3.2 Պատմական ակնարկ

Մարալիկ՝ նախկինում Մոլլագոյկչա, որը թարգմանաբար նշանակում է տերտերի կացարան, եղել է պատմական Հայաստանի Շիրակի գավառի գյուղերից մեկը: Մարալիկի արևմտյան մասում գտնվել է հին գերեզմանոց , որի տարածքում այժմ առանձնատներ են: Այդ տարածքի շինարարական տաշխատանքների ընթացքում հայտնաբերվել են հնագույն աշխատանքային գործիքներ, զենքեր, խաչքարեր, որոնք վերաբերում են 11-12-րդ դարերին: Գտնված շիրմաքարերի արձանագրությունները վկայում են, որ բնակավայրը գոյություն է ունեցել 9-11-րդ դարերում: Հին գերեզմանոցից պահպանվել է 1551,1630,1720 թվականներին վերաբերող վիմագիր շիրմաքարեր: 1829թ. թուրքական կայսրության հալածանքներից ազատվելու համար արևմտյան Հայաստանի Բասենի գավառի մի շարք գյուղերից Մոլլագոյկչա բնակավայր են տեղափոխվել և մշտական բնակություն հաստատել 59 ընտանիք՝ 371 անձով: Այս տարածքը նաև անվանել են << Ղոեր>> այսինքն մեռած հարթավայր: Առաջինը 1829թ. Մոլլագոյկչա ոտք են դրել Ավագ և Հակոբ Չարչոյլյանները, Բոգո Կարասովը, Անդիկը, Հեբոն, Անանիան, Կիրակոսը, Գևորգը, Դոխոն, Ուռուտը: Չարչոյլյան եղբայրները և բոզոյենք կառուցել են առաջին ձիթհանքը, իսկ մարդոյենք՝ ջրաղացը: 1863թ. բացվել է գյուղի առաջին գյուղական դպրոցը: Թուրքական ավազակային հարձակումներից ու ավերումներից զերծ չի մնացել նաև Մոլլագոյկչան: 1918-1920թթ. Երկու հարձակում է տեղի ունեցել գյուղի վրա, որին հերոսաբար դիմագրավել են տեղի բնակիչները: Առանձնապես կոիվներում աչքի են ընկել Սիմոնյան Առաքելը, Աղաբաբյան

Աղանիկը, Չարչոլյան Հովհաննեսը, Աբաջյան Տիգրանը, Ժաժոյան Սեդրակը և ուրիշներ: Խորհրդային կարգերի հաստատումից հետո 1927թ. Մոլլագյոկչան վերանվանվել է Կապուտանի, իսկ 1935թ. հուլիսի 26-ին ՀԽՍՀ կենտրոնականի որոշմամբ՝ Մարալիկ: 1939թ. Ադինի շրջանի վարչական կենտրոնը դարձել է Մարալիկը: 1962թ. օգոստոսի 30-ի կառավարության որոշմամբ Մարալիկ գյուղը ստացել է քաղաքատիպ ավանի կարգավիճակ: 1996 թվականի հունիսի 30-ին ՀՀ «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի Մարալիկ ավանը ստացել է քաղաքի կարգավիճակ: Տարիների ընթացքում Մարալիկը շենանում է իր նոր առօրյայով , բազմապիսի հոգերով: Վեր են խոյանում բազմահարկ շենքեր, հիվանդանոց հանրակրթական դպրոցներ, մշակույթի տուն, երաժշտական և արվեստի դպրոցներ, նախակրթարաններ: Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 51 որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի զինանշանը, դրոշը և հիմնը:

Մարալիկցին նայում է իր ապագային լի հույսով և սպասումներով:

### Ավանդություն

Ամեն տարի մի սարի մարալ՝ եղնիկ իրեն կամքով եկել է այստեղ, մատաղվելու համար գլուխը դրել Սուրբ Ստեփանոս վանքի դռանը: Գյուղացիները բռնել են մարալին և մատաղ արել: Մի անգամ էլ որսորդը հրացանով սպանել է մարալին: Դրանից հետո մարալները չեն երևացել: Գյուղի անունն էլ մատաղվող մարալների հիշատակի համար Մարալիկ են դրել:

### 3.3 ՍՈՑԻԱԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

#### Ժողովրդագրություն


Մարալիկ քաղաքային համայնքի բնակչությունը 2016 թվականի դրությամբ ըստ պետական ռեգիստրի տվյալների կազմել է 7256 մարդ, սակայն փաստացի բնակչությունը՝ 6035 , որից 3175-ը կանայք են, իսկ 2860-ը տղամարդիկ:

		Մշտական			Առկա		
		ընդամենը	այդ թվում		ընդամենը	այդ թվում	
			իգական	արական		իգական	արական
ա.	բնակչության թվաքանակը, մարդ	7256	3535	3721	6035	3175	2860
բ.	տնային տնտեսությունների թվաքանակը	2228	X	X	2019	X	X
գ.	այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող	3	X	X	3	X	X
դ.	կիսակառույց տներում բնակվող	31	X	X	31	X	X

## Տնային տնտեսությունների միջին չափը



## Մեռատարիքային սանդղակ



**Սոցիալական կազմի ցուցանիշներ**

	Ընդամենը	իգական	արական
ա. Հաշմանդամներ.....	28	12	16
.....			
որից՝ բ. հաշմանդամ երեխա.....	28	12	16
այդ թվում՝ գ. 0-5 տարեկան.....	6	2	4
.....			
դ. 6-15 տարեկան.....	18	7	10
.....			
ե. 16-18 տարեկան.....	4	3	2
.....			
զ. Միակողմանի ծնողագուրկ երեխա.....	72	38	34
է. Առանց ծնողական խնամքի մնացած երեխա.....	4	2	2
ը. Միայնակ մոր երեխա.....	20	14	6
թ. Ամուսնալուծված անձի երեխա.....	30	15	15
ժ. Ոստիկանության հսկողության տակ գտնվող երեխա.....	2	0	2
.....			
ի. այդ թվում՝ հաշմանդամներ.....			
.....			
լ. Կենսաթոշակառու.....	1450	830	620
.....			
խ. Միայնակ չաշխատող կենսաթոշակառու.....			
.....			
ծ. Տարեց կենսաթոշակառուներ (75 տարեկան և բարձր).....	313	180	133
.....			
Կ. Արցախյան պատերազմի մասնակիցներ	50	-	50
Հ. Զոհված ազատամարտիկների ընտանիքներ	15	-	15

**քաղաքում գրանցված գործազուրկների թիվը (մարդ)**

		ընդհանուր	իգական	արական
ա.	Ընդամենը գրանցված գործազուրկներ, որից`	635	367	268
բ.	տարրական կրթությամբ +8 – ամյա կրթ.	62	22	40
գ.	միջնակարգ կրթությամբ	470	271	199
դ.	միջին մասնագիտական կրթությամբ	69	50	19
ե.	բարձրագույն կրթությամբ	34	24	10

Հ/Հ		Քանակը /ընդամենը/	Եթե այո, ապա դրանցում գրավածների թիվը, մարդ	Եթե համայնքում առկա չէ, կամ առկա է և չի գործում, նշեք մոտակա հաստատության հեռավորությունը, կմ
ա.	Զբաղվածության կենտրոն	1	4	
բ.	Սոցիալական ծառայություն	1	6	
գ.	Նոտարական գրասենյակ	1	2	
դ.	ՔԿԱԳ գործակալություն	1	2	
ե.	Աղետների ռիսկերի նվազեցման համակարգող մարմին	1	22	



#### 4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մարալիկ համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը և համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանու իր 11 անդամներով: Համայնքի աշխատակազմը բաղկացած է 37 աշխատակցից: Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը գտնվում է ք. Մարալիկ Մաղաթյան փ. 1 հասցեում: Շենքի ընդհանուր վիճակը լավ է: Հազեցած է տեխնիկայով, սակայն այն բավարար չէ աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար: Համայնքի ավագանին 2016 թվականի նոյեմբերի 07-ի թիվ 60-Ա և 61-Ա որոշմամբ հաստատել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝


- համայնքի ղեկավար - 1 միավոր, 250,0 հազ. դրամ,
- համայնքի ղեկավարի տեղակալ - 1 միավոր, 153,0 հազ. դրամ,
- համայնքի ղեկավարի օգնական- 1 միավոր, 85,0 հազ. դրամ,
- համայնքի ղեկավարի խորհրդական- 1 միավոր, 85,0 հազ. դրամ,
- աշխատակազմի քարտուղար - 1 միավոր, 153,0 հազ. դրամ,
- ՔԿԱԳ-ի Մարալիկի տարածքային բաժնի պետ- 1 միավոր, 256,623հազ.դրամ,
- ներքին աուդիտի բաժնի պետ-1 միավոր, 102,0 հազ. դրամ,
- գլխավոր մասնագետ – հաշվապահ - 1 միավոր, 101,0 հազ. դրամ,
- գլխավոր մասնագետ -- 5 միավոր, 101,0 հազ. դրամ,
- առաջին կարգի մասնագետ - 2 միավոր, 85,0 հազ. դրամ,
- ՔԿԱԳ-ի Մարալիկի տարածքային բաժնի առաջին կարգի մասնագետ - 1 միավոր, 133,602 հազ. դրամ,
- հաշվային գործակալ-1 միավոր, 80,0 հազ. դրամ,
- հարկային գործակալ-1 միավոր, 85,0 հազ. դրամ,
- հարկային գործակալ-2 միավոր, 80,0 հազ. դրամ,
- իրավական հարցերով պատասխանատու-1 միավոր, 85,0 հազ. դրամ,
- տեղեկատվության պատասխանատու-1 միավոր, 85,0 հազ. դրամ,
- համակարգչային օպերատոր-1 միավոր, 80,0 հազ. դրամ,
- քարտուղարուհի-1 միավոր, 77,904 հազ. դրամ,
- Էլեկտրիկ-1 միավոր, 85,0 հազ. դրամ,
- տնտեսվար-1 միավոր, 75,0 հազ. դրամ,
- ծառ.մեքենայի վարորդ-մեխանիկ-1 միավոր, 77,904 հազ. դրամ,
- հավաքարար - 1 միավոր, 75,0 հազ. դրամ
- ցերեկային պահակ-բակապահ-1 միավոր, 72,752 հազ. դրամ
- Քաղաքային պուրակի պատասխանատու պահակ-1 միավոր, 72,752 հազ. դրամ
- աղբահանման պատասխանատու և կազմակերպիչ-1 միավոր, 72,752 հազ. դրամ
- աղբաթափ մեքենայի վարորդ-մեխանիկ-1 միավոր, 100,0 հազ. դրամ
- սան մաքրման մեքենայի վարորդ-մեխանիկ-1 միավոր, 100,0 հազ. դրամ
- կամազ մեքենայի վարորդ-1 միավոր, 72,752 հազ. դրամ
- Աղբահանող բանվոր-4 միավոր, 85,0 հազ. դրամ
- Փողոցների սանմաքրող հավաքարար-7 միավոր, 100,0 հազ. դրամ
- Աղբահանության վարձավճարների գանձող-0.5 միավոր, 36,376 հազ. դրամ:

Համայնքի ավագանին 2016 թվականի նոյեմբերի 07-ի թիվ 62-Ա որոշմամբ հաստատվել է Մարալիկի համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

**Համայնքի ավագանի**

**Համայնքի ղեկավար**



## 5.Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն

Մարալիկ համայնքում յուրաքանչյուր տարի կատարվել է բնակիչների հաշվառում:

Մարալիկ քաղաքի խնամակալության և հոգաբարձության մարմինը իր աշխատանքները կազմակերպում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, ՀՀ Հնտանեկան օրենսգրքի, ՀՀ Երեխաների իրավունքների մասին օրենքով և այլ իրավական ակտերով: Խնամակալության և հոգաբարձության մարմինն կից ստեղծված է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով, որի կազմը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատել է համայնքի ավագանին: Խնամակալության և հոգաբարձության մարմինը իր կարևորագույն խնդիրն է համարում անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների, ինչպես նաև անչափահասների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը:

Ընտանիքում ապրելու և դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովումը կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը: Սահմանված կարգով կատարվել են ուսումնասիրություններ, կատարվել են եզրակացություններ, նշանակվել են խնամակալներ, հոգաբարձուներ, պատրոնաժներ:

Մարալիկ համայնքում տարերային և տեղնուղղիական աղետների կանխարգելման նպատակով կազմվել է պլան, ստեղծվել են հանձնաժողովներ և հստակորեն սահմանվել են գործառույթների իրականացնելու և կազմակերպելու

- 1) համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքը
- 2) քաղաքացիական պաշտպանությունը
- 3) բնակչության պատսպարում և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը
- 4) համայնքի բնակչության ազդարարումը
- 5) պաշտպանական կառույցների հաշվառումը, պահպանումը, բնակչության ուսուցումը
- 6) բժշկական սպասարկումը
- 7) սննդամթերային և նյութատեխնիկական ապահովումը
- 8) գյուղատնտեսական կենդանիների և մշակաբույսերի պաշտպանությունը

Նշված աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար քաղաքապետարանը մշտապես հրահանգներ և ցուցումներ է ստանում մարզպետարանից և այդ հարցերով զբաղվող այլ կառույցներից :

## 6.Ֆինանսական ոլորտ

### Համայնքի բյուջեն

Համայնքի 2014-2015թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2016-2020թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2014թ. փաստ.	2015թ. փաստ.	2016թ. նախ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.
	ԲՅՈՒՋԵՏՍՈՒՆԸ ՄՈՒՏՔԵՐԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	140139.3	150368.1	146593.3	136833.0	162219.7	179719.7	191819.7
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵՎԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	140988.9	148368.9	146458.3	139333.0	161219.7	178719.7	190819.7
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	30361.5	30663.9	31377.1	31965.6	31408.6	32008.6	33108.6
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	12425.9	11168.4	11857.3	11863.1	10808.6	10908.6	11008.6
	Գույքահարկ շենքերի և	2587.7	2239.0	2047.2	2054.5	2000.0	2100.0	2200.0

	շինությունների համար							
	Հողի հարկ	9838.1	8929.3	9810.0	9808.6	8808.6	8808.6	8808.6
<b>1.2</b>	<b>Գույքային հարկեր այլ գույքից</b>	<b>11527.6</b>	<b>13239.2</b>	<b>13652.9</b>	<b>14143.5</b>	<b>14500.0</b>	<b>15000.0</b>	<b>16000.0</b>
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	11527.6	13239.2	13652.9	14143.5	14500.0	15000.0	16000.0
<b>1.3</b>	<b>Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ</b>	<b>3575.0</b>	<b>3053.7</b>	<b>2866.9</b>	<b>2959.0</b>	<b>6100.0</b>	<b>6100.0</b>	<b>6100.0</b>
	Տեղական տուրքեր	3575.0	3053.7	2866.9	2959.0	3100.0	3100.0	3100.0
<b>1.4</b>	<b>Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ</b>	<b>2833.0</b>	<b>3202.5</b>	<b>3000.0</b>	<b>3000.0</b>	<b>3000.0</b>	<b>3000.0</b>	<b>3000.0</b>
	Պետական տուրքեր	2833.0	3202.5	3000.0	3000.0	3000.0	3000.0	3000.0
<b>1.5</b>	<b>Այլ հարկային եկամուտներ</b>							
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							
<b>2</b>	<b>ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՆԵՐ</b>	<b>93275.5</b>	<b>99671.2</b>	<b>101156.2</b>	<b>91192.6</b>	<b>117000.0</b>	<b>134000.0</b>	<b>145000.0</b>
<b>2.1</b>	<b>Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ</b>							
<b>2.2</b>	<b>Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ</b>							
<b>2.3</b>	<b>Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ</b>	<b>93275.5</b>	<b>99671.2</b>	<b>101156.2</b>	<b>91192.6</b>	<b>117000.0</b>	<b>134000.0</b>	<b>145000.0</b>
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	72824.4	83658.2	89143.2	91192.6	105000.0	120000.0	130000.0
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	19692.1	16013.0	10528.0		12000.0	14000.0	15000.0
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	759.0		1485.0				
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
<b>2.4</b>	<b>Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ</b>							
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		2990.7					
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
<b>3</b>	<b>ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*</b>	<b>16601.9</b>	<b>18033.8</b>	<b>13925.0</b>	<b>13174.8</b>	<b>12811.1</b>	<b>12711.1</b>	<b>12711.1</b>
<b>3.1</b>	<b>Տոկոսներ</b>							
<b>3.2</b>	<b>Շահաբաժիններ</b>							
<b>3.3</b>	<b>Գույքի վարձակալությունից եկամուտներ</b>	<b>4475.9</b>	<b>4062.0</b>	<b>3832.8</b>	<b>3401.6</b>	<b>3227.9</b>	<b>3127.9</b>	<b>3127.9</b>
	Համայնքի սեփականություն	1321.5	1266.3	1127.9	1127.9	1127.9	1127.9	1127.9

	համարվող հողերի վարձակալության վարձավճարներ							
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ							
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ							
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	3154.4	2795.7	2704.9	2273.7	2100.0	2000.0	2000.0
3.4	<b>Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում</b>	11836.0	13737.8	9842.2	9523.2	9363.2	9362.2	9362.2
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	4358.6	5342.9	5363.2	5363.2	5363.2	5363.2	5363.2
3.5	<b>Վարչական գանձումներ</b>	275.0	168.0	200.0	200.0	200.0	200.0	200.0
	Տեղական վճարներ	275.0	168.0	200.0	200.0	200.0	200.0	200.0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ							
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ	7477.4	8394.9	4479.0	4160.0	4000.0	4000.0	4000.0
3.6	<b>Մուտքեր տույժերից, տուգանքներից</b>	15.0	66.0	50.0	50.0	20.0	20.0	20.0
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	15.0	66.0	50.0	50.0	20.0	20.0	20.0
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից							
3.7	<b>Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ</b>							
3.8	<b>Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ</b>							
3.9	<b>Այլ եկամուտներ*</b>							
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային	19462.5	13710.8	9848.0	7000.0	10000.0	10000.0	10000.0

	բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր							
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ							
<b>II.</b>	<b>ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (1+2+3+4)</b>	<b>-625.6</b>	<b>-2708.8</b>	<b>-74877.8</b>	<b>-2000.0</b>	<b>2000.0</b>	<b>2000.0</b>	<b>2000.0</b>
<b>1</b>	<b>Հիմնական միջոցների իրացումից մուտքեր</b>							
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր							
	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
<b>2</b>	<b>Պաշարների իրացումից մուտքեր</b>							
<b>3</b>	<b>Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր</b>							
<b>4</b>	<b>Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր</b>							
	Հողի իրացումից մուտքեր	<b>-625.6</b>	<b>-2708.8</b>	<b>-74877.8</b>	<b>-2000.0</b>	<b>2000.0</b>	<b>2000.0</b>	<b>2000.0</b>
	Ոչ կյուրակական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
<b>III.</b>	<b>ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)</b>							
<b>Ա.</b>	<b>ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)</b>							
<b>1</b>	<b>ՓՈՒՍԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ</b>							
<b>1.1</b>	<b>Արժեթղթեր</b>							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
<b>1.2</b>	<b>Վարկեր</b>							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
<b>1.3</b>	<b>Փոխատվություններ</b>							
	-բյուջետային փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							
<b>2</b>	<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ</b>							
<b>2.1</b>	<b>Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն</b>							
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր							
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր							
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում							

2.2	<b>Փոխատվություններ</b>							
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր							
	-փոխատվությունների տրամադրում							
2.3	<b>Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը</b>	0.4	1999.2	135.0	500.0	1000.0	1000.0	1000.0
2.4	<b>Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս</b>							
2.5	<b>Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս</b>							
2.6	<b>Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում</b>							
	<b>որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը</b>							
Բ.	<b>ԱՐՏԱՔԻՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ</b>							
1	<b>ՓՈՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ</b>							
1.1	<b>Արժեթղթեր</b>							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	<b>Վարկեր</b>							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	<b>Փոխատվություններ</b>							
	-փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							

## 7. Հասարակական կարգի պահպանություն

Համայնքում կատարված վարչական իրավախախտումների մասին ոստիկանությունը մշտապես տեղեկատվություն և վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն է ներկայացնում քաղաքապետարան:

Վարչական իրավախախտման վերաբերյալ այն գործերը, որոնք քննարկելու և վարչական պատասխանատվության ենթարկելու իրավասություն ունեն համայնքի ղեկավարը և վարչական հանձնաժողովը, քննարկում և վարչական իրավախախտում կատարողի նկատմամբ կիրառվում են վարչական պատասխանատվության համապատասխան միջոցներ, այդ թվում, տուգանք, նկատողություն, դիտողություն: Քննարկումից հետո սահմանված կարգով նյութերն ուղարկվում են ոստիկանություն:

## 8. Հանրային միջոցառումների կանոնակարգում

- Քաղաքի օրվա միջոցառումների կազմակերպում:
- Առաջին զինակոչ – հունվարի 10
- Հայոց բանակի օր – հունվարի 28

- <<Անի ձմեռ>> մարգամշակութային միջոցառում – փետրվարի 19
- Կանանց միջազգային օր – մարտի 8
- Մայրության և գեղեցկության օր- ապրիլի 7
- Եղեռնի զոհերի հիշատակի օր – ապրիլի 24
- Շուշիի ազատագրման և Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի օր – մայիսի 9
- Երեխաների պաշտպանության օր – հունիսի 1
- Ձյուղոյի հուշամրցաշար – հունիսի 10
- Հրաժեշտ մանկապարտեզին – օգոստոսի 28
- Կրթության և գիտության օր – սեպտեմբերի 1
- Անկախության օր – սեպտեմբերի 21
- Ֆուտբոլի Անիի գավաթ – սեպտեմբերի 25
- Հացի փառատոն – հոկտեմբերի 1
- Քաղաքի օր – սեպտեմբեր-հոկտեմբեր
- Նոր տարի և սուրբ ծնունդ – դեկտեմբերի 25-31

## 9. Պաշտպանության կազմակերպում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 1-ին մասի 17 կետի դրույթներով և ի կատարումն «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի պահանջների Մարալիկ համայնքում հաստատվել է զորահավաքային մարմնի կազմը և կազմվել է զորահավաքային պլանը: Մշտական աջակցություն է ցուցաբերվում զորակոչին, զորահավաքներին ուսումնավարժական հավաքներին:

## 10. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

Մարալիկ համայնքում բարձր է պահվում քաղաքի մաքրման, աղբահանման և սանամաքրման աշխատանքների որակը: Շաբաթական 4-5 օր կատարվում է աղբաթափում և հինգ օր փողոցների սանամաքրում: Տարեկան 4-ից 5 անգամ կատարվում է քաղաքի աղբանոցի մաքրում: Քաղաքն ունի մեկ մասնագիտացված աղբաթափ մեքենա և սանամաքրման ևս մեկ տեխնիկա: Համայնքում կա նաև մասնագիտացված ունիվերսալ նոր տեխնիկա, որը կատարում է փողոցների ավլում, լվացում, կանաչ գոտիների ջրում, ձնամաքրում և աղ ու ավազով մշակում: Այն բարձրացնում է քաղաքի մաքրման որակը:

Մարալիկում կա արդեն երեք հանգստյան գոտիներ ինչպես նաև ակնկալվում են ևս ստեղծել նոր կանաչ գոտիներ: Մենք նպաստում ենք ոչ միայն հանգստյան գոտիների ստեղծմանը այլև հոգ ենք տանում դրանց պահպանմանն ու խնամքին: Մարալիկի Հաղթանակի զբոսայգին ունի նաև շատրվաններ, որոնք ավելի գեղեցիկ են դարձնում բնակչի հանգիստը: Կա ևս այգի քաղաքապետարանին կից՝ հետնամասում, որը ծառայում է թե աշխատակիցների, թե բնակիչների և թե կից դպրոցի երեխաների ակտիվ հանգստին: Եվս մեկ այգի վերականգնվում է մշակույթի տան կից տարածքում:

### 1) Բնակարանային ֆոնդ

	Բնակարաններ և տներ	Քանակը	Զբաղ.տարածքը(հա)	Մակերեսը (քմ)
ա.	Առանձնատներ	980	13.72	137200
բ.	Բազմաբնակարան շենքեր	38	2.9184	29184
գ.	Ընդամենը	1018	16.6384	166384



## 2) Ենթակառուցվածքներ

	Ենթակառուցվածք	Երկարություն (կմ)
ա.	Ջրամատակարարման ցանց	21
բ.	Կոյուղու ցանց	6.5
գ.	Գազաբաշխիչ ցանց	24.0
դ.	Էլեկտրամատակարարման ցանց	50.0

### 11. Հողօգտագործում

ա.	Համայնքի հողերն ըստ նշանակության	Հա
բ.	Գյուղատնտեսական	3720.95
գ.	Բնակավայրի հողեր	334
դ.	Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	23.13
ե.	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	52.04
զ.	Հատուկ պահպանվող տարածքների հողեր	
է.	ատուկ նշանակության հողեր	
ը.	Անտառային հողեր	
թ.	Ջրային հողեր	6.30
Ընդամենը		

#### Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման ծրագրեր ըստ տարիների

	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.
Օտարվող հողամասերի չափը	1.5 հա	2 հա	2.2հա	2.5հա

### 12. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՆԱԴԱՐՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարալիկ համայնքն ունի 13.2 կմ երկարությամբ միջբնակավայրային ճանապարհներ : Գնացուցիչների և փողոցների վիճակը բավարար է : Վերջին տարիներին հիմնանորոգվել են ներքաղաքային` Կոլտնտեսականների, Երիտասարդականներ, Թումանյան, Բարեկամության և Գազարինի փողոցները:

Համայնքում միջքաղաքային տրանսպորտ չի գործում, սակայն եղած սեփական ավտոմեքենաների և տաքսիների թիվը բավականացնում է մարդկանց բնականոն տեղաշարժին:

Ընդամենը	Ջրաղեցրած մակերես (հա)	Որից ասֆալտապատ
----------	------------------------	-----------------

1	Պետ. ենթակայության		
2	Համայնքային ենթակայության	13.2	9.8հա
3	Ընդամենը	13.2	9.8հա

### 13. Առևտուր և ծառայություններ

Մարալիկի քաղաքային համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի և մասնավոր կազմակերպությունների կողմից : Համայնքում գործում են հանրային սննդի խանութներ, հացի փոեր, հանրային սննդի սպասարկման օբյեկտներ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԽԱՆՈՒԹՆԵՐ	23
ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ	5
ՀԱՑԻ ՓՈՒԵՐ	5
ՎԱՐՍԱՎԻՐԱՆՈՑ	5
ԴԵՂԱՏՆԵՐ	4

### 14. Կրթություն

Համայնքի կրթական հաստատությունները Մարալիկի քաղաքային համայնքում գործում են 2 միջնակարգ դպրոց և 1 արհեստագործական ուսումնարան, որոնք վերանորոգված են: Երկու դպրոցներն էլ ունեն լոկալ ջեռուցման համակարգ: Դպրոցներում գործում են նախակրթարաններ: Համայնքում գործում է <<Անի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ը, որն ունի վերանորոգման կարիք, և երաժշտական դպրոց :

#### Կրթական հաստատությունների մասին տեղեկատվություն

	Նախա Կրթարաններ	Միջնակարգ դպրոցներ	Ուսումնարան	Բուհեր
ա. Հաստատությունների թիվը	2	2	1	-
բ. Ուսանողներ/աշակերտներ	160	671	182	130

գ. Մանկավարժներ	5	63	53	
դ. տնօրեններ		2	1	
ե. Գրադարաններ		2	1	

## Նախադպրոցական հաստատությունների կառուցվածքը

Նախադպրոցական հաստատություններ	Խմբերի քանակը		
	Կրտսեր խումբ	Միջին խումբ	Ավագ խումբ
<<Անի մանկապարտեզ>> ՀՈԱԿ	1	1	1

## 15. Մշակույթ

Մարալիկ քաղաքային համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում:

Քաղաքը հայտնի է վարչատարածքում եղած վաղ և ուշ միջնադարյան խաչքարներով: Մարալիկում պահպանվել են 1903 թ.-ի փայտածածկ սբ. Աստվածածին (V-VI դարեր), որը վերանորոգվել է 2016 թվականին Մարալիկի քաղաքապետարանի և բարերարների կողմից, և կաթոլիկ Սբ. Պողոս-Պետրոս (XVII-XX դարեր) եկեղեցիները, “Կարմիր” (XIX-XX դարեր) և Սբ. Ստեփանոս վանքերը, կիկլոպյան ամրոցը և մեկ մատուռ, իսկ 2013 թվականին Վանիկ Ուռումյանի ներդրմամբ կառուցվեց Սբ. Սարգիս եկեղեցին՝ Ուռումենց սրբի կից տարածքում: 2015 թվականին Սոս և Արտակ Գևորգյանների ներդրմամբ կառուցվեց Սբ. Գևորգ մատուռը՝ դարձյալ սրբի տարածքում:



Մարալիկի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ

### Մարալիկի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
ա. Ամրոց	Ք.ա. 2 հազ.	3 կմ ան
բ. Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հազ.	ամրոցի շրջակայում
գ. Ամրոց «Ծակ քար»	Ք.ա. 2-1 հազ.	5 կմ ամ
դ. Բնակատեղի	Ք.ա. 1 հազ.	ամրոցի մոտ
ե. Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	ամրոցի շրջակայքում

զ. Բնակատեղի «Ավդալենց»	անտիկ-վաղ միջնադար	3 կմ հվ-ամ
է. Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	բնակատեղիի շրջակայքում
ը. Բնակատեղի «Կիրակոսենց»	Ք.ա. 1 հազ.	հվ մասում
թ. Դամբարանադաշտ	Ք.ա. 1 հազ.	բնակատեղիի շրջակայքում
ժ. Բնակատեղի	3-5 դդ.	4 կմ հս-ամ, «Ղափլոյենց խարաբեք» վայրում
ի. Գերեզմանոց	12-14 դդ.	հվ-ամ մասում
լ. Գերեզմանոց	18-20 դդ.	0.1 կմ հս-աե
խ. Գյուղատեղի	5-19 դդ.	7-8 կմ ամ, «Ղըռխ» վայրում
ծ. Գերեզմանոց	17-20 դդ.	գյուղատեղիի աե մասում
կ. Խաչքար	9-10 դդ.	
հ. Խաչքար	10-11 դդ.	
ձ. Եկեղեցի Սբ. Պողոս-Պետրոս	5-6 դդ.	գյուղատեղիում
ղ. Եկեղեցի «Կարմիր վանք»	վերակառ. 1901 թ.	ամ եզրին
ճ. Գերեզմանոց	10-20 դդ.	Եկեղեցու շրջակայքում
մ. Եկեղեցի Սբ. Ստեփանոս	19 դ.	ամ մասում

յ. Գերեզմանոց	12-14 դդ.	Եկեղեցու շրջակայքում
ն. Հուշաղբյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1943 թ.	աե մասում
շ. Հուշաղբյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1946 թ.	ամ մասում
ո. Հուշաղբյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1990 թ.	հվ մասում
չ. Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1967 թ.	քաղաքի մեջ
պ. Հուշարձան Ինքնաթիռի աղետից զոհվածներին	1989 թ.	3 կմ ամ
ջ. Ձիթհան	19 դ.	հս մասում
ռ. Մատուռ «Ղուշի»	ուշ միջնադար	4.5 կմ հս-աե
ս. Քարայր «Ծակ քար»	միջնադար	5 կմ ամ
վ. Քարայր-կացարանների համալիր		
տ. Հուշարձան «Սողոմոն Թոհլերյան»	2015թ.	Կենտրոնական հրապարակ

### Համայնքի մշակութային կազմակերպությունները

Համայնքի տարածքում գործում է համայնքային ենթակայության գրադարանը, որն ունի 1500 հաճախորդ, արվեստի դպրոցը, որն ունի տարբեր խմբակներ, որոնցից պարի խմբակը բազմաթիվ մրցույթների դափնեկիր է և մշակութային երիտասարդական կենտրոնը: Գործող հիմնարկները ունեն շենքային պայմանների բարելավման կարիք որը ակնկալվում է լուծել ՀԶՀԾ-ի ընթացքում:

դ. Գրադարաններ	1
ե. Զբոսայգիներ	4

**16. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ**

Համայնքի տարածքում գործում է <<Մարալիկի առողջության կենտրոն>> ՓԲԸ-ն

**Համայնքում առկա առողջապահական հիմնարկները.**

	Հաստատությունների թիվը *	Դրանցից քանիսն են գործում	Դրանցում գրավածների թիվը, մարդ	Դրանցում բժիշկների թիվը, մարդ			Ըստ նախագծի մահճակալների թիվը	Դրանցում հաշվառվածների թիվը, մարդ	Եթե համայնքում առկա չէ կամ առկա է և չի գործում, նշեք մոտակա հաստատության հեռավորությունը, կմ
				մանկաբույժ	ընտանեկան բժիշկ	նեոնատոլոգ			
1) Հիվանդանոցային բժշկական կազմակերպություն	1	1	14	1	-	1	10	12	
2) Արտահիվանդանոցային բժշկական կազմակերպություն՝ (Պոլիկլինիկա և այլ հաստատություն) /մեծահասակների/	1	1	87	1	2	X	X		
3) Արտահիվանդանոցային բժշկական կազմակերպություն՝ (Պոլիկլինիկա և այլ հաստատություն) /մանկական/						X	X		27
4) Մասնագիտացված արտահիվանդանոցային բժշկական կենտրոն						X	X	X	27
5) Ստոմատոլոգիական բժշկական օգնություն իրականացնող հաստատություն	1	1	1	X	X	X	X	X	

6) Դեղատոմս	5	5	5	X	X	X	X	X	
7) Այլ						X	X	X	

## 17. Գյուղատնտեսություն

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում ցանվում են հացահատիկային մշակաբույսեր՝ ցորեն, գարի և այլ կուլտուրաներ, ինչպես նաև կարտոֆիլ: Համայնքի բնակլիմայական պայմանները, ինչպես նաև հողատեսքերի դիրքադրությունը միանգամայն բարենպաստ է հացահատիկային կուլտուրաների արտադրության ու անասնապահության համար: Մակայն այս երկու ոլորտները ներկայումս ունեն միջին զարգացվածության տեմպ: Համայնքի բնակչության %-ը զբաղվում է անասնապահությամբ, իսկ արտադրանքը հիմնականում սպառում են տնտեսության ներսում:

Համայնքի բնակիչները իրենց տնամերձ հողամասերում աճեցնում են բանջարաբուստանային կուլտուրաներ և պտղատու ծառեր:

Համայնքի ազգաբնակչության եկամտաբերության բարձրացմանը նպաստելու համար ակնկալվում է Մարալիկ համայնքում կառուցել անասնապահական ջրի խմոցներ:

### 1) ՊՍՏՈՒՆՆԵՐԻ ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ

ՕՐՈՇԻՆԵՐԻ ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ	ՕՐՈՇԻՆԵՐԻ ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ	
	ՕՐՈՇԻՆԵՐԻ ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ	ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ (ՆՍՏՆԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ)
1	2	3
ա. Ենթահողի շրջանի օրոշիներ, ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ	2314	2314
բ. ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ	950	950
գ. ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ ( %)	40.5	45.5
դ. ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ	493	493
ե. ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ	130	180
զ. ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ	9100	100000

### 2) ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ ( ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ )

ՕՐՈՇԻՆԵՐԻ ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ	ՕՐՈՇԻՆԵՐԻ ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ	
	ՕՐՈՇԻՆԵՐԻ ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ	ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ (ՆՍՏՆԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ)
1	2	3
ա. ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ	37200	37200
բ. ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ	-	-
գ. ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ	-	-
դ. ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ	1700.5	1700.5
ե. ԿՈՒՆԿՆԵՐԻ ԿՈՆՍՏՐԱԿՏԱԿԱՆ ԿԱՐԿԱՆՈՒՄ	210.1	210.1



գ. 'áëï³Ý³ÙÇÝ Ùß³İ³µáóÕë»ñ	-	-
է. Î»ñ³ÙÇÝ Ùß³İ³µáóÕë»ñ	-	-

### 18.Արտաքին կապեր և հարաբերություններ

Այս տարիների ընթացքում ձևավորվել են լուրջ հարաբերություններ թե տարածաշրջանի և թե միջազգային համագործակցությունների շրջանակներում:

Մարալիկը համագործակցում է Երևանի Դավթաշենի, Արաբկիրի և Աջափնյակի թաղապետարանների հետ:Կա համագործակցություն ԼՂՀ Ասկերանի շրջանի հետ որի շրջանակներում լինում են այցելություններ տարածքներ:

Քաունթերփարթ ինթերնեյշնլի հետ երեք տարվա համագործակցության շրջանակներում լուրջ համագործակցություններ ձևավորվեցին թե ՀՀ տարբեր մարզերի գյուղական ու քաղաքային համայնքների հետ ինչպես նաև արտաքին միջավայրում:

Մարալիկն ունի լուրջ համագործակցություն ՌԴ Ուլյանովսկ քաղաքի հետ,որը պլանավորում է վերածել քույր քաղաքների համագործակցության: Մարալիկի վարչական տարածքում ` դեպի Քարաբերդ համայնք տանող ճանապարհինկից, գտնվում է Ուլյանովսկի ինքնաթիռի ավիավթարի անձնակազմի հիշատակը հավերժացնող համալիրը, ուր վերջին տարիներին հաճախակի են գալիս Ուլյանովսկի պատվիրակությունը: Կա նաև հրավերք Մարալիկի քաղաքապետին Ուլյանովսկ այցելելու և համագործակցելու հարցում:

### 19.Համայնքի ձեռներեցության ոլորտները

	Կազմակերպության թիվը	Զբաղվածների թիվը
1)Արդյունաբերության		
2)Շինարարություն	2	6
3)Տրանսպորտ և կապ	2	5
4)Բնակկոմունալ տնտեսություն	-	-
5)Առողջապահություն	1	87
6)Առևտուր և սպասարկում	59	100
7)Գյուղատնտեսություն	-	-

## 20. ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Վերջին տարիների ընթացքում նկատվում է որոշակի դրական տեղաշարժ ՏԻՄ-ի և բնակչության փոխհարաբերություններում: ՏԻՄ-ի գործունեությունը դարձել է համեմատաբար ավելի թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-ի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ-ի կողմից կազմակերպված հանրային հանդիպումներին ու միջոցառումներին:

Համայնքի ավագանու կողմից ընդունվել են տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերը, որոնք մեծապես կնպաստեն բնակիչների ավելի ակտիվ մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը:

**21. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ  
ԾՐԱԳԻՐ 1**

Մարալիկի բամբակամանվածքային ֆաբրիկայի վերակառուցում

**ՆՊԱՏԱԿԸ**

Ծրագրի նպատակն է արտադրել ոլորտին համարժեք արտադրանք ստեղծել նոր աշխատատեղեր երեք տարվա ընթացքում հասցնել մինչև 500-ի, այն կնպաստի տարածքի և Մարալիկ քաղաքի բնակչության զբաղվածության և սոցիալական վիճակի բարելավումը:

**ԽՆԴԻՐ**

Համագործակցել նոր սեփականատիրոջ հետ, համայնքի հնարավորությունների շրջանակներում ստեղծել բարենպաստ դաշտ աշխատանքի կազմակերպման և արդյունքների բարձրացման հարցում:

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ծրագրի ֆինանսական միջոցները կներդրվի սեփականատիրոջ կողմից շենքի արդիանականացման, նոր սարքավորումների ձեռքբերման համար:

**ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի կատարման ժամկետներն են 2017-2020թթ., որի արդյունքում կունենանք նորովի վերանորոգված արտադրամաս և վարչական շենք, նոր սարքավորումներ, արտադրանքները կիրացվեն նաև ՀՀ սահմաններից դուրս:

**ԾՐԱԳԻՐ 2**

**Մեքենա-տրակտորների կայանների վերականգնում**

**ՆՊԱՏԱԿԸ**

Ծրագրի նպատակն է վերականգնել նախկին մեքենա-տրակտորային պարկերը, որով հնարավորություն կտրվի Մարալիկի և տարածքի հողագործներին նոր տեխնիկասարքավորումներով կատարել հողի մշակումը և բարձրացնել արդյունքները:

**ԽՆԴԻՐ**

Քանի որ ներկայիս մեքենա-տրակտորները հին են և բարձր որակով չեն կարողանում կատարել հողի մշակման գործողությունները ուստի անհրաժեշտ է բարձրացնել որակը և ճիշտ կառավարել հողի մշակման համար նախատեսվող գնային շուկան:

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Օրագրի համար ակնկալվում է ՀՀ կառավարության գործուն աջակցությունը տեխնիկա սարքավորման տրամադրման տարածքի հարցը կլուծի համայնքը, իսկ շենք-շինությունները հարցը հնարավոր կլինի լուծել Սարալիկ համայնքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող շենք շինություններով:

**ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ , ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Օրագրի կատարման հիմքում կլինի հողի մշակման համար նախատեսվող ծախսերը, կբարձրացվի հողի բերրիությունը, բերքատվությունը: Այն ակնկալվում է լուծել մինչև 2020 թվականին:

**ԾՐԱԳԻՐ 3**

**Համայնքի ոռոգովի հողերի ջրային համակարգի վերանորոգում, դաշտավարության և այգեգործության ցանցում:**

**ՆՊԱՏԱԿԸ**

Համայնքին կից հյուսիս հարավ մայրուղու հարևանությամբ համակարգի վերանորոգումով նպաստել բանջարաբոստանային մշակաբույսերի մշակմանը և նոր այգիների հիմնանորոգմանը: Այն կբարձրացնի հողերի եկամտաբերությունը:

**ԽՆԴԻՐ**

**Սույն համակարգը ունի մասնակի վերանորոգման կարիք, որի կառուցմամբ կավելանա հողի մշակումների թիվը:**

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Օրագրի ֆինանսական ակնկալվում է ջրային պետական կոմիտեի որոգման համակարգի կողմից, որի արդյունքում հող մշակողների ավելացման հաշվին կավելանա ֆինանսական աճ:

**ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ , ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Օրագրի կատարումով հնարավոր կլինի հողերը մշակել ամբողջությամբ, կավելանա բնակչության եկամուտները, արտադրել բանջարաբոստանային մշակաբույսեր, զարգացնել այգեգործությունը:

**ԾՐԱԳԻՐ 4**

**Հյուսիս հարավ մայրուղու Սինոհիդրո և գործընկեր ընկերության Սարալիկ համայնքում տարածքի տրամադրում և արտադրության զարգացում:**

**ՆՊԱՏԱԿԸ**

Հյուսիս հարավ մայրուղու չինական ընկերության Սարալիկ համայնքի կից արտադրական նշանակման հողատարածքում տեղական արդյունքում հնարավոր կլինի ստեղծել նոր աշխատատեղեր:

**ԽՆԴԻՐ**

Ապահովել տարածքներ չինական բազայի գործունեության համար:

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ծրագրի ֆինանսավորման միջոցները ներառվել են հյուսիս-հարավ մայրուղու ներդրումային ծրագրի միջոցներով:

**ԾՐԱԳԻՐ 5**

**Բարեկամության փողոցի հիմնովին ասֆալտապատում**

**ՆՊԱՏԱԿԸ**

Փողոցը, որը սպասարկում է 2-րդ թաղամասը, Ռիգայի փողոցը, Լիվանյան թաղամասն ու Շիրազի թաղամասի մի մասը, դարձնել բարեկարգ, հետիոտների համար կառուցել մայթ և նպաստել ճանապարհի գազոնների կանաչապատ տարածքների ստեղծմանը:

**ԽՆԴԻՐ**

Ճանապարհը գտնվում է խիստ անբարեկարգ վիճակում:  
Դիմել Շիրակի մարզպետին հրատապ ծրագրերի շրջանակներում իրականացնելու հարցում:  
Կազմակերպել ծրագրի նախագծա-նախահաշվային փաստափոթերի նախագծումը:

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ծրագիրը իրականացնել մարզի հրատապ հիմնախնդիրների լուծման ծրագրով, որի նախնական արժեքը շուրջ 30 մլն. դրամ է:

**ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի համակարգող Շիրակի մարզպետարան, պատասխանատու՝ Մարալիկի քաղաքապետ Արտակ Գևորգյան, կատարման ժամկետը մինչև 2015 թվականի դեկտեմբեր: Արդյունքում կունենանք թաղամասերը սպասարկող ասֆալտապատ ու բարեկարգ ճանապարհներ, որը կմիացնի քաղաքի Հր. Շահինյան կենտրոնական փողոցին:

**ԾՐԱԳԻՐ 6**

**Մարալիկ քաղաքի Սբ. Աստվածածին եկեղեցուն կից հրապարակի կառուցում, տարածքի բարեկարգում**

**ՆՊԱՏԱԿԸ**

Եկեղեցուն կից տարածքը բարեկարգել, հիմնել քաղաքի 4-րդ հրապարակը, տարածքը ասֆալտապատել, որ եկեղեցում կատարվող ծիսակատարությունների ժամանակ հավուր պատշաճի մարդիկ կարողանան անցկացնել ծիսակատարությունը:

**ԽՆԴԻՐ**

Եկեղեցուն կից տարածքը գտնվում է խիստ անմխիթար վիճակում, այն չի ծառայում նպատակին, որն անհրաժեշտ է լուծել առաջնահերթ:

Կազմակերպել տարածքի անօրինական ժամանակավոր շինությունների ապամոնտաժումը: Տարածքը ազատել ավելորդ աղբից ու վագոն տնակներից: Կազմակերպել ծրագրի իրականացման համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի նախագծումը և ապահովել էսքիզային դիզայն:

### **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ծրագիրը հնարավոր է լուծել մարզի հրատապ հիմնախնդիրների լուծման ծրագրով, որի նախնական արժեքը կարող է լինել 30-40 մլն. դրամ:

### **ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի պատասխանատուն է Մարալիկի քաղաքապետ Արտակ Գևորգյանը և Շիրակի թեմի առաջնորդարանը: Այն նախատեսվում է իրականացնել 2016 թվականին և ավարտել մինչև տարեվերջ: Ծրագրի կատարման արդյունքում կունենանք քաղաքային եկեղեցուն արժանի բարեկարգ ու գեղեցիկ տարածք, որը կսպասարկի քաղաքի ազգաբնակչությանը:

## **ԾՐԱԳԻՐ 7**

**Հր. Շահինյան 6-րդ նրբանցք դեպի թիվ 1 դպրոց և մարզադաշտ տանող ճանապարհի ասֆալտապատում**

### **ՆՊԱՏԱԿԸ**

Ճանապարհը իր նշանակությամբ կարևոր է, քանի որ այն սպասարկում է դեպի BTB բանկ, քաղաքային մարզադաշտ, թիվ 1 միջնակարգ դպրոց և բազմաբնակարան 2-րդ թաղամաս: Այն նախատեսվում է բերել պատշաճ վիճակի:

### **ԽՆԴԻՐ**

Ճանապարհը գտնվում է վատ վիճակում, այն նախատեսվում է դարձնել նորմալ, որը կնպաստի սպասարկման որակի բարելավմանը:

Ստեղծել նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, կատարել էսքիզային նախագիծ:

### **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ծրագիրը հնարավոր է իրականացնել մասամբ համայնքի միջոցների հաշվին, մասամբ՝ ներդրումային՝ մարզի հրատապ հիմնախնդիրների լուծման ծրագրով, նաև բարերարներով: Ծրագրի արժեքը կարող է հասնել մինչև 20 մլն. դրամի:

### **ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի պատասխանատուն է Մարալիկի քաղաքապետ Արտակ Գևորգյանը: Այն անհրաժեշտ է կատարել 2016-2017 թվականների ընթացքում: Ծրագրի կատարման արդյունքում կապահովենք թիվ 1 դպրոց, մարզադաշտ, BTԵ բանկ և քաղաքի 2-րդ թաղամաս այցելող ազգաբնակչությանը բարեկարգ և նորմալ երթևեկելի փողոց և մայթ:

## **ԾՐԱԳԻՐ 8**

**Աբովյան փողոցի հիմնովին ասֆալտապատում**

### **ՆՊԱՏԱԿԸ**

Ճանապարհը գտնվում է խիստ անմխիթար վիճակում, որը սպասարկում է թե բազմաբնակարան, թե սեփական տների բնակիչներին: Այն նախատեսվում է հիմնովին ասֆալտապատել:

### **ԽՆԴԻՐ**

Աբովյան թաղամասը խիտ է բնակեցված, անհրաժեշտ է բարձրացնել բնակչության ճանապարհի սպասարկման որակը:

Անհրաժեշտ է դիմել համապատասխան կառույցներին խնդիրը ներառել որևէ ծրագրի շրջանակում: Անհրաժեշտ է կատարել ծրագրի իրականացման նախնական գնահատում:

### **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ծրագիրը հնարավոր է իրականացնել ՀՀ տրանսպորտի նախարարության ֆինանսական միջոցների հաշվին (պահուստային ֆոնդ) կամ մարզի ծրագրերի հաշվին: Ծրագրի համար անհրաժեշտ է շուրջ 40 մլն. դրամ:

### **ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի պատասխանատուն է Մարալիկի քաղաքապետ Արտակ Գևորգյանը: Այն անհրաժեշտ է իրականացնել 2017 -2018 թվականներին: Ծրագրի կատարման արդյունքում թաղամասի բազմաբնակարան բնակելի շենքերի սեփական սեկտորի բնակիչներին կապահովվեք նորմալ երթևեկելի փողոց , որը փողոցը կկապի Երկաթուղայիններ և Գագարին փողոցներին:

## ԾՐԱԳԻՐ 9

Մաշտոցի փողոցի սալապատում

### ՆՊԱՏԱԿԸ

Ճանապարհը գտնվում է սեփական սեկտորում և ուղեկցում է դեպի քաղաքի կարմիր վանք կոչվող տարածքը: Այն նախատեսվում է հիմնովին սալապատում:

### ԽՆԴԻՐ

Ճանապարհը գտնվում է խիստ անմխիթար վիճակում, անհրաժեշտ է այն կառուցել, որպեսզի դեպի սրբավայր՝ կարմիր վանք տանող ճանապարհը գտնվի պատշաճ վիճակում:

Անհրաժեշտ է կատարել ճանապարհի հարթեցում, անհրաժեշտ թեքությունների գնահատում ջրահեռացման համար և կազմել նախահաշիվ աշխատանքների արժեքի գնահատման համար:

### ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների հաշվին, որի համար անհրաժեշտ է շուրջ 3 մլն. դրամ գումար:

### ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի պատասխանատունն է Մարալիկի քաղաքապետ Արտակ Գևորգյանը և թաղամասի բնակիչները: Այն նախատեսվում է կատարել 2016- 2017 թվականների ընթացքում: Ծրագրի կատարման արդյունքում տարածքը կմաքրվի ցեխից և անհարթություններից, դեպի սրբատեղի կլինի ավելի բարեկարգ ճանապարհ:

## ԾՐԱԳԻՐ 10

Մարալիկի մշակույթի տան կից այգու վերակառուցում և շահագործում

### ՆՊԱՏԱԿԸ

Քաղաքի կենտրոնական հրապարակի մշակույթի տանը կից այգին օգտագործել բնակիչների ակտիվ հանգստի, մշակութային միջոցառումների անցկացման և քաղաքում գեղեցիկ կանաչ միջավայր ստանալու համար:

### ԽՆԴԻՐ



Այգին գտնվում է կիսակառույց, կիսաքանդ վիճակում, հարկավոր է այն կանաչապատել, ծաղկապատել, տեղադրել հանգստյան նստարաններ, աղբամաններ, լուսավորել, շահագործել շատրվանները, անցկացնել ոռոգում:

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ծրագիրը նախատեսվում է կատարել համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների հաշվին, որի համար անհրաժեշտ է շուրջ 2 մլն. դրամ գումար:

**ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի պատասխանատուն է Մարալիկի քաղաքապետ Արտակ Գևորգյանը և կատարման ժամկետներն են 2015-2016 թվականների հուլիս ամիսը: Ծրագրի արդյունքում քաղաքը կհամարվի ևս մեկ հանգստյան այգով, որը նոր շունչ կհաղորդի քաղաքին:

**ԾՐԱԳԻՐ 11**

**Բազմաբնակարան բնակելի կտուրների թիթեղապատում՝ 10 շենքերի (Մաղաթյան 1,2,3,4, 2-րդ թաղամաս 1,2,4,6 շենքեր, Շիրազի թաղամասի 3 շենքեր)**

**ՆՊԱՏԱԿԸ**

Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների վերջին հարկում ապրող քաղաքացիների բարեկեցության բարձրացում, շենքի պահպանության, երկարակեցության ապահովում:

**ԽՆԴԻՐ**

Շենքերի կտուրները գտնվում են քայքայված վիճակում, անձրևաջրերը ներթափանցում են բնակիչների տները, թուլացնում շենքերի ամրությունը:

Կա շենքերի մի մասի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, անհրաժեշտ է կազմել նաև մյուսները: Ձգտել ծրագիրը իրականացնել առաջնահերթ, քանի որ խնդիրը հրատապ է:

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ծրագիրը հնարավոր է իրականացնել մարզի հրատապ հիմնախնդիրների լուծման ծրագրով, որի մի մասի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կան: Ծրագրի համար անհրաժեշտ է շուրջ 70 մլն. դրամ գումար:

**ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի պատասխանատուն է Մարալիկի քաղաքապետ Արտակ Գևորգյանը և կատարման ժամկետներն են 2016-2019 թվականները: Արդյունքում բոլոր բազմաբնակարան բնակելի շենքերի կտուրները կլինեն վերանորոգված, վերջին հարկում ապրող քաղաքացիները կլինեն պաշտպանված, կապահովվի շենքը քայքայումից:

**ԾՐԱԳԻՐ 12**

Մինի ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի, թենիսի, սահադաշտի, խաղահրապարակների կառուցում

**ՆՊԱՏԱԿԸ**

Ստեղծել սպորտային և ժամանցային հնարավորություն սպորտասերների համար, որը կնպաստի տարածքների բարեկարգմանը և սպորտային կենցաղի ձևավորմանը:

**ԽՆԴԻՐ**

Հարկավոր է սպորտի այս մարզաձևերը մասսայականացնել և ժամանցային վայր ստեղծել համայնքի ազգաբնակչության համար:

Անհրաժեշտ է կատարել տարածքի ճիշտ վերլուծություն և ընտրություն, նախահաշիվների կազմում և աշխատանքների համակարգում:

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ծրագիրը իրականացնելու համար ներդրումներ արվելու է համայնքի բյուջեից, որի համար անհրաժեշտ է 2-3 մլն. դրամ գումար:

**ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի պատասխանատուն է Մարալիկի համայնքի ճարտարապետը և քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի գլխավոր մասնագետները: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016-2019 թվականների ընթացքում: Ծրագրի արդյունքում կլուծենք ազատ ժամանցի զբաղվածություն, սպորտի մասսայականացում:

**ԾՐԱԳԻՐ 13**

**Համայնքի արոտավայրերում ջրարբիացման համակարգի անցկացում**

**ՆՊԱՏԱԿԸ**

Ծրագրի նպատակն է խմելու ջուր հասցնել արոտավայրերում խոշոր և մանր եղջերավոր անասուններին արոտի շրջանում: Ամառվա տապին ջրի պահանջը բավարարելը նպաստելու է կենդանիների կաթնատվության աճին:

**ԽՆԴԻՐ**

Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ խոշոր և մանր եղջերավոր անասունները համայնքից կտրում անցնում են մինչև 4-5 կմ ճանապարհ և ամառվա շոգին տանջվում ծարավից:

Անհրաժեշտ է կատարել տարածքի ճիշտ վերլուծություն և ընտրություն, նախահաշիվի ճշտում , ֆինանսական միջոցների հայթայթում:

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Աշխատանքներ կատարելու համար ներդրում կատարվելու է համայնքի բյուջեի միջոցներից և ներդրումային ծրագրով, որի համար անհրաժեշտ է մինչև 3-5 մլն. դրամ գումար:

**ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԸ**

Ծրագրի պատասխանատուն է Մարալիկի քաղաքապետարանի աշխատակազմի գյուղ հարցերով պատասխանատուն: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016 թվականի մինչև օգոստոս ամիսը: Ծրագրի իրականացումով կնպաստենք անասունների ծարավի հազեցմանը և կաթնատվության բարձրացմանը, որը ավելի եկամտաբերություն կապահովի անասուններին:

**ԾՐԱԳԻՐ 14**

**Համայնքային գրունտային ճանապարհների հարթեցում, ավազակոպիճով և շեֆինով մշակում**

**ՆՊԱՏԱԿԸ**

Համայնքի ոչ ասֆալտապատ գրունտային ճանապարհը դարձնել հեշտ երթևեկելի, որը կնպաստի նաև ասֆալտապատ փողոցների մաքրության պահպանմանը:

**ԽՆՂԻՐ**

Համայնքի երկրորդական փողոցները գտնվում են խիստ անմխիթար վիճակում և դժվարություններ են ստեղծում թաղամասում ապրող բնակիչների շարժին: Ընտրությունը կատարել ըստ բնակչության խտության և կարևորության: Աշխատանքները կատարել հնարավորինս ճիշտ եղանակային ժամանակահատվածի:

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ծրագիրը հնարավոր է կատարել համայնքի բյուջեի միջոցներից և հյուսիս-հարավ ծրագրի շրջանակներում, երբ կքանդվի գործող ճանապարհը, իսկ քանդված ասֆալտաշերտը և շեֆինը հնարավոր կլինի լցնել այս փողոցներում:

**ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԸ**

Ծրագրի պատասխանատուն է Մարալիկի քաղաքապետ Արտակ Գևորգյանը: Իրականացման ժամանակաշրջանը 2017-2019 թվականներն են: Արդյունքում ասֆալտապատ փողոցների կողքին կունենանք նաև նորմալ երթևեկելի գրունտային ճանապարհ:

**ԾՐԱԳԻՐ 15**

**Գիշերային լուսավորության ցանցի անցկացում նոր թաղամասում, ձորի թաղամասում, Աբովյան և Գազարին փողոցներում**

## ՆՊԱՏԱԿԸ

Բերել ավարտուն տեսքի քաղաքի լուսավորության ցանցը, նաև այս թաղամասերում ապահովել նորմալ գիշերային կենցաղ համայնքի ազգաբնակչության համար:

## ԽՆԴԻՐ

Համայնքում գիշերային լուսավորություն է անցկացվել շուրջ 90%-ում , մնում են այս նշված հատվածները, որով կավարտենք լուսավորության ցանցի շինարարությունը:

Անհրաժեշտ է առաջնահերթ լուսավորել քաղաքի 10 % դեռևս չլուսավորված փողոցներ: Կենտրոնական փողոցում անհրաժեշտ է փոխել լուսակիրները նոր լուսատուներով: Պետք է ներկել հենասյունները, ուղղել ծուռ հենասյունները:

## ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ծրագրի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ կներդրվի համայնքի բյուջեից, որի համար անհրաժեշտ է 4 մլն. դրամ գումար:

## ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Ծրագրի պատասխանատուն է Մարալիկի քաղաքապետ Արտակ Գևորգյանը: Նախատեսված է 2016-2017 թվականներին:

Ծրագրի արդյունքում կունենանք 100 %-ով լուսավորված համայնք, նոր էներգոխնայողություն, գեղեցիկ լուսատուներ քաղաքաշինական տեսքով փողոցներ:

## ԾՐԱԳԻՐ 16

Ասֆալտապատ փողոցների ամենամյա փոսային նորոգում, ճանապարհային նշանների տեղադրում, նշագծում, փողոցների սանմաքրում, գազոնների կանաչապատում, ծառատնկում

## ՆՊԱՏԱԿԸ

Քաղաքի կենտրոնական փողոցները պահել պատշաճ վիճակում, նորմալ երթևեկելի, երթևեկությունը դարձնել կարգավորված, փողոցներին կից գազոնները դարձնել կանաչապատ:

## ԽՆԴԻՐ

Փողոցներից շատերի ասֆալտաշերտը 30-35 տարվա վաղեմություն ունեն, որոնք անհրաժեշտ են պարբերաբար ուշադրության կենտրոնում պահել:

Անհրաժեշտ է ապահովել բավարար ֆինանսական միջոցներ, ձեռք բերել երթևեկության տեխնիկական միջոցներ ու կահավորել: Փողոցներում պետք է ապահովել մաքրություն և գազոններում կատարել կանաչապատում, ծառատնկում:

## ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ծրագիրը հնարավոր է կատարել համայնքի բյուջեի ֆինանսական միջոցներով, ինչպես նաև ներդրումային ծրագրի միջոցներով, որի համար անհրաժեշտ է տարեկան 30-40 մլն. դրամ գումար:

**ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի պատասխանատուն է Մարալիկի քաղաքապետ Արտակ Գևորգյանը: Այն հնարավոր է իրականացնել տաք եղանակներին: Ծրագրի արդյունքում փողոցները կլինեն նորմալ երթևեկելի, երթևեկությունը կանոնակարգված, անվտանգ, գազոնները մաքուր, կանաչապատ, ծաղկապատ ու ծառապատ:

**ԾՐԱԳԻՐ 17**

**Մարալիկի կենտրոնական , Գագարին, Մադաթյան, Հր. Շահինյան փողոցներին կից մայրերի անբարեկարգ հատվածների ասֆալտապատում կամ բետոնապատում**

**ՆՊԱՏԱԿԸ**

Ծրագրի նպատակն է մայրերը բերել պատշաճ վիճակի, կանոնակարգել հետիոտների շարժը և ապահովել անվտանգությունը, թե հետիոտների, թե վարորդների համար:

**ԽՆՆԻՐ**

Քաղաքի փողոցների նշված հատվածների որոշ մասում մայրերի մի մասը կառուցված չէ, մյուս մասն էլ գտնվում է անմխիթար վիճակում: Այն հնարավոր է բարեկարգել, կամ ասֆալտապատել, կամ բետոնապատել: Մայրերից շատերը ասֆալտապատվել են շուրջ 30 տարի առաջ և գտնվում են անմխիթար վիճակում: Անհրաժեշտ է բերել պատշաճ վիճակի:

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ծրագիրը հնարավոր է իրականացնել մասամբ համայնքի բյուջեի ֆինանսական միջոցներով, մասամբ` ներդրումային ծրագրի հաշվին, որի համար անհրաժեշտ է 20-30 մլն. դրամ գումար:

**ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի պատասխանատուն է Մարալիկի քաղաքապետարանի աշխատակազմը: Կատարման ժակետներն են 2016-2019 թվականները: Կատարման արդյունքում կունենանք բարեկարգ մայրեր և կկարգավորենք հետիոտների, տրասպորտի անվտանգ շարժը:

**ԾՐԱԳԻՐ 18**

**Մարալիկի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում**

**ՆՊԱՏԱԿԸ**

Մանկապարտեզի շենքը բերել պատշաճ վիճակի, բարձրացնել մանկահասակ երեխաների կրթական որակը: Շենքը հիմնանորոգել, կատարել շենքի ներքին հարդարում, կտուրի վերանորոգում, դուռ լուսամուտի փոփոխում:

**ԽՆԴԻՐ**

Մանկապարտեզի շենքը գտնվում է անմխիթար վիճակում, այն անհրաժեշտ է հիմնովին վերանորոգել: Անհրաժեշտ է կազմել շենքի վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը: Դիմել տարբեր կառույցների ծրագիրը ներգրավելու համար: Ապահովել քաղաքապետարանի կողմից ներդրում:

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Մանկապարտեզի շենքի վերանորոգումը հնարավոր է իրականացնել Համայնքային զարգացման հիմնադրամի միջոցներով և համայնքի համաֆինանսավորմամբ, որի համար անհրաժեշտ է շուրջ 80 մլն. դրամ գումար:

**ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի պատասխանատուն է Մարալիկի քաղաքապետ Արտակ Գևորգյանը և ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017 թվականին: Ծրագրի կատարման արդյունքում կունենանք նորմալ պայմաններով մանկապարտեզ, որը կապահովի նորմալ կրթական պայմաններ:

**ԾՐԱԳԻՐ 19**

**Համայնքային սպորտդպրոցի շենքի հիմնանորոգում, լողավազանի կառուցում**

**ՆՊԱՏԱԿԸ**

Ծրագրի իրականացման նպատակն է վերանորոգել համայնքային սպորտդպրոցի շենքը, ստեղծել բավարար պայմաններ սպորտային մարզաձևերի պարամունքները անցկացնելու համար: Կառուցել փակ և բաց լողավազաններ՝ լողի մարզաձևին մասնակցելու համար::

**ԽՆԴԻՐ**

Համայնքային մարզադպրոցի շենքը գտնվում է խիստ անմխիթար վիճակում, այն հարկավոր է հիմնանորոգել: Անհրաժեշտ է կազմել վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը: Կատարել գործելիք խմբակների ճշտում: Հարցի համար պետք է դիմել բարեգործ ընկերներություններին և ապահովել համայնքի կողմից ներդրում:

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ծրագիրը հնարավոր է իրականացնել մարզային հրատապ ծրագրով կամ համայնքային զարգացման հիմնադրամի ներդրումային միջոցներով, որի համար անհրաժեշտ է շուրջ 100 մլն. դրամ գումար:

**ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԸ**

Ծրագրի պատասխանատուն է Մարալիկի քաղաքապետ Արտակ Գևորգյանը, որը հնարավոր է իրականացնել 2018-2019 թվականներին: Ծրագրի կատարման արդյունքում կունենանք սպորտային բարեկարգ մասնաշենք, մարզական հրապարակներ և համայնքը կունենա լողի մարզաձևից օգտվելու հնարավորություն:

**ԾՐԱԳԻՐ 20**

**Արվեստի դպրոցի կտուրի թիթեղապատում, շենքի ջեռուցման համակարգի անցկացում**

**ՆՊԱՏԱԿԸ**

Քանի որ արվեստի դպրոցում կատարվել է ներքին հարդարում, ուստի անհրաժեշտ է կտուրը ևս վերանորոգել, որպեսզի պահպանվի վերանորոգումը, և անցկացնել ջեռուցման համակարգ՝ ձմռանը աշխատանքները արդյունավետ դարձնելու համար:

**ԽՆԴԻՐ**

Արվեստի դպրոցի շենքի կտուրը գտնվում է քայքայված վիճակում, որը առաջացնում է կաթոցներ շենքի ներսում: Անհրաժեշտ է այն թիթեղապատել, քանի որ ներսի ներքին հարդարումը քայքայվում է: Կա կատարման նախահաշիվը մարզի հրատապ հիմնախնդրի ծրագրով ջեռուցումը անցկացնել համայնքի միջոցների հաշվին:

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՅՆԵՐԸ**

Ծրագիրը հնարավոր է իրականացնել մարզային հրատապ ծրագրի շրջանակներում: Ծրագրի համար անհրաժեշտ է շուրջ 15 մլն. դրամ գումար:

**ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի պատասխանատուն է Մարալիկի արվեստի դպրոցի տնօրեն Սոֆիկ Հակոբյանը: Իրականացման ժամկետը՝ 2016-2017 թվականներ: Արդյունքում կունենանք կահավորված, բարեկարգ ու ժամանակակից դպրոց:

**ԾՐԱԳԻՐ 21**

**Նոր հուշարձանների հիմնում և պահպանություն**

**ՆՊԱՏԱԿԸ**

Եկեղեցուն կից հրապարակի կառուցումից հետո տեղադրել Հիսուսի արձանը, որը իր գորակցությունը կբերի հավատավոր ժողովրդին, իսկ Երիտասարդականների հրապարակում՝

խաչքարի տարածքում, կառուցել հավերժության կամար, որը կամբողջացնի խաչքարի կոլորիտը:

**ԽՆԴԻՐ**

Անհրաժեշտ է նշված տարածքները արժեվորել, համալրել պատմամշակութային արժեքները, այն փոխանցել հաջորդ սերունդներին: Պետք է կառուցել հրապարակը, այնուհետև ձեռնարկել հուշարձանի հիմնումը:

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ծրագիրը հնարավոր է իրականացնել համայնքի բյուջեի ֆինանսական միջոցներով, ինչպես նաև ներդրումային ծրագրով, որի համար անհրաժեշտ է շուրջ 5 մլն. դրամ գումար:

**ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի պատասխանատուն է Մարալիկի քաղաքապետ Արտակ Գևորգյանը: Կատարման ժամկետը 2016-2018 թվականները: Արդյունքում կունենանք նոր պատմամշակութային կոթողներ, որը նաև դաստիարակչական արժեք կհանդիսանա սերունդներին:

**Ծրագիր 22**

**Մարալիկի նորակառույց թաղամասի 10-րդ փողոցի ասֆալտապատում:**

**ՆՊԱՏԱԿԸ**

Նորակառույց թաղամասի 10-րդ փողոցը գտնվում է խիստ անմխիթար վիճակում :Այն կապում է 8-րդ, 13-րդ և 14-րդ փողոցները իրար, որի շահագործումով այս փողոցները կկապվեն նորակառույց փողոցին:

**ԽՆԴԻՐ**

Ճանապարհը գտնվում է խիստ անմխիթար վիճակում: Անհրաժեշտ է կազմել ծրագրի նախագծանախահաշվային փաստաթղթերը, գտնել ֆինանսական աղբյուրները:

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ծրագիրը հնարավոր է իրականացնել տրանսպորտի նախարարության պահուստային ֆոնդի ֆինանսական միջոցների հաշվին: Ծրագրի նախնական արժեքը կազմում է շուրջ 4000000 դրամ:

**ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ և ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Ծրագրի պատասխանատուն է Մարալիկ համայնքի ղեկավար Ա.Գևորգյանը, ճարտարապետ Գ.Գրիգորյանը:

Ծրագրի կատարման ժամկետը՝ 2019 թվական:



## Ծրագիր 23

### **Մարալիկ քաղաքի կոյուղագծերի նորոգման և նոր ցանցի կատարման ծրագիր ՆՊԱՏԱԿԸ**

Ծրագրի նպատակն է վերականգնել կոյուղացանցի վթարային հատվածները, իսկ գոյություն ունեցող թաղամասում կառուցել նոր կոյուղու համակարգ:

#### **ԽՆԴԻՐ**

Ծրագրի խնդիրն է բավարար պայմաններ ստեղծել ջրահեռացման համակարգի համար: Անհրաժեշտ է գտնահատել ծավալները, ֆինանսական աղբյուրներ:

#### **ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Ծրագրի կատարման ֆինանսական ակնկալվող աղբյուրներն են գերմանական KFW բանկի միջոցները, որով և կատարվեց ջրագծերի ցանցի մոնտաժումը:

#### **ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ծրագրի պատասխանատուն է Մարալիկի քաղաքապետ Արտակ Գևորգյանը: Կատարման ժամկետը 2018-2019 թվականները: Արդյունքում կբարելավվի կոյուղու համակարգի վիճակը և բավարար ծառայություն կմատուցվի Մարալիկի ազգաբնակչությանը, կկառուցվի նոր ցանց այն թաղամասերում, որտեղ բացակայում է կոյուղահամակարգը:

## 22.ՈՒԹՀՍ (SWOT) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մարալիկ համայնքում առկա ենթակառուցվածքների ռեսուրսների, տնտեսական և սոցիալական տարբեր ոլորտների ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների, ռիսկերի խնդիրների և համայնքի զարգացման հնարավորությունների վերաբերյալ.

ՈԼՈՐՏ	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր	Հնարավորություններ	Սպառնալիքներ
1) Փոքր և միջին ձեռնարկատիրության և մասնավոր հատվածի զարգացում	1. Բարձրագույն կրթությամբ մարդկանց առկայությունը 2. Աշխատանքային փորձի առկայությունը	Արտաքին աղբյուրներ ից կախվածությունը	Մասնագետների շահագրգռվածությունը և, համայնքի ղեկավարի աջակցությունը	Արտագաղթելու միտումը, միգրացիան
2) Կրթության, սպորտի և երիտասարդության հարցեր ա. դպրոցների շենքային պայմանների բարելավմանն ուղղված աշխատանքներ բ. մարզական և մշակույթային միջոցառումների ակտիվացում գ. նախադպրոցական կրթության զարգացում	Համապատասխան և շենքային պայմանների և մասնագետների առկայությունը	Աշակերտների քանակի նվազման միտումը, նախադպրոցական հիմնարկում երեխաների քանակի պակասելը	Ուսումնական բազայի առկայությունը	Ժողովրդագրական փոփոխությունները
3) Առողջապահություն	Շենքային բավարար պայմանների առկայություն	Մասնագետ բժիշկների պակաս	Բուժհաստատության և ղեկավարության և համայնքի ղեկավարի համագործակցությունը	Երիտասարդ կադրերի արտագաղթ
4) Սոցիալական պաշտպանություն, երեխաների իրավունքների	Համայնքում իրականացվող ծրագրերի վերաբերյալ	անտարբերություն	Սոցիալական ծառայությունների բնագավառի մասնագետների մշտական	Բնակչության ոչ բավարար վստահությունը սոցիալական

պաշտպանություն	տեղեկատվության լայն տարածում		վերապատրաստում	ծառայության հիմնարկությունների նկատմամբ
5)Գյուղատնտեսություն	Համայնքում հողային և մարդկային ռեսուրսների առկայություն	Մսի և բրդի իրացման դժվարություններ, տեխնիկական միջոցների սղություն	Հակակարկտային կայանքների տեղադրման հնարավորություն	Բնակլիմայական գործոն
6)Բնապահպանություն	Արտադրական և կենցաղային թափոնների տեղադրման համակարգի կատարելագործում, համայնքի ղեկավարի աջակցությունը աղբահանության հարաբերությունների ձևավորման համար	Կեղտաջրերի մաքրման կայանի բացակայության վնասակար սովորույթները	Միջհամայնքային աղբավայրի նախագծում	Հողի էրոզիայի դեմ պայքարի անբավարար վիճակ, բնական և տեխնածին աղետների սպառնալիքները
7)Քաղաքաշինություն	Բազմաբնակարան շենքերի տանիքների և փողոցների վերանորոգման պլանավորված աշխատանքներ	Ֆինանսական միջոցների սղություն, ջրահեռացման համակարգի ոչ բավարար վիճակ	Անհատական բնակարանաշինության բարելավում, բնակչության պաշտպանությունն ու արտակարգ իրավիճակների կանխարգելման աշխատանքներ	Արտագաղթը, աշխատուժի արտահոսքը, ֆինանսական միջոցների ոչ բավարար լինելը
8)Ենթակառուցվածքներ	Ենթակառուցվածքների հետակտիվ, համագործակցված աշխատանքներ, ճանապարհային ցանցի նորոգման, ձմեռային և ընթացիկ պահպանության արդյունավետ աշխատանքներ,	Ոչ բավարար գործող ոռոգման համակարգ, վնասված կոյուղագծերի առկայություն	Ոռոգման համակարգի վերանորոգում և ընդլայնում, կոյուղագծերի վերանորոգում	Կոյուղագծերի մաքրման կայանի բացակայության պատճառով վարակիչ հիվանդությունների առաջացման հնարավորություններ

	խմելու ջրի բավարարմատակարարում			
9)Ֆինանսներ	Համայնքում առկա ֆինանսական միջոցների հավաքագրման կայուն մակարդակ, մասնագիտական բավարար ռեսուրսներ, համայնքի միջոցների նպատակային օգտագործում	Տեղական ինքնակառավարման մասին օրենքի անկատարությունը	Պլանավորվող բյուջեի իրատեսությունը և հատակությունը, գույքահարկի, հողի հարկի, տուրքերի բազաների ճշգրտման արդյունավետ աշխատանքներ	Տեղեկացվածության և գիտելիքների պակասը, աշխատուժի արտահոսքը, ոչ բավարար ֆինանսական միջոցները
10)Հասարակական կարգի պահպանություն	Օրինականության պահպանման համար կանխարգելիչ աշխատանքների արդյունավետություն	Աշխատատեղի պակասը, անտարբերությունը	Քաղաքացիական ակտիվությունը	Կոռուպցիայի զարգացման հնարավորությունների կանխման ոչ բավարար լինելը
11)Պաշտպանություն	Մշտական աջակցություն զորակոչին, զորահավաքների և ուսումնավարժական հավաքներին, քաղաքացիական մարմիններին մշտական օժանդակությունը	Անտարբերությունը և կոռուպցիայի առկայությունը	Մարդկանց մոտ շահագրգռվածության և մոտիվացիայի առկայությունը	Երիտասարդների արտահոսքը

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ